ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք.Երևան 10.12.2024թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ հիմնադրամ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) ռեկտորի ընտրության նիստն անցկացվեց ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երևան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ):

Նիստին ներկա էին 20 անդամներից 18-ը՝

Կարեն Գիլոյանը - ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, Խորհրդի նախագահ,

Արսեն Միխայլովը - ՀՀ վարչապետի օգնական,

Գոհար Մամիկոնյանը -Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ,

Արսեն Հակոբյանը - ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության պետ,

Սերգեյ Աբրահամյանը - ՀՀ ԿԳՄՍ նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիրակության բաժնի պետ,

Էդուարդ Քալանթարյանը - Հայաստանի հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան,

Հարություն Ցավրյանը - ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ,

Ռոբերտ Խաչատրյանը - Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ,

Աշոտ Տիրացույանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս,

Լուսինե Տանաջյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս,

Անահիտ Բարսեղյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս,

Եկատերինա Նահապետյան - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոս,

Նարինե Մարե-Գասպարյան - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս,

Ժիրայր Դավեյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող,

Լաուրա Միրզոյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող, Խորհրդի քարտուղար

Սուրեն Եղիազարյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող,

Հեղինե Սարկիսյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող,

Սուսան Ավետիսյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Առողջարարական տեխնոլոգիաների և սպորտային տուրիզմի կառավարման ֆակուլտետի ուսանող:

Բացակայում էին՝

Սամվել Գևորգյանը - Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն,

Դավիթ Մոսինյանը - «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿԻ–ի տնօրեն:

Ռեկտորի ընտրության նիստն իրավազոր էր:

Օրակարգը հաստատվեց միաձայն՝

ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթի անցկացում:

Համաձայն համաձայն ՀՖԿՍՊԻ հիմնադրամնի ռեկտորի ընտրության կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 4.2 կետի՝ ռեկտորի ընտրության նիստի օրակարգը ներառում էր հարցերի հետևյալ հերթականությունը՝
ա. հավակնորդների ներկայացում և մրցույթին մասնակցելու համապատասխանության որոշում,
բ. թեկնածուների ծրագրերի ներկայացում,
գ. հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,
դ. ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկության անցկացում,
ե. քվեարկության արդյունքների ներկայացում և որոշման ընդունում:

Խորհրդի քարտուղար Լ.Միրզոյանը ներկայացրեց, որ մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ թեկնածու, որի փաստաթղթերը համապատասխանել են մրցույթին մասնակցելու համար սահմանված պահանջներին:

Ռեկտորի պաշտոնի համար դիմել էր մեկ թեկնածու՝ Տիգրան Սիմոնյանը, որի կողմից ներկայացված բուհի զարգացման ծրագիրն ուղարկվել էր Խորհրդի անդամներին:

Համաձայն Կանոնակարգի 4.2 կետի բ ենթակետի՝ թեկնածուն հրավիրվեց ներկայացնելու բուհի զարգացման իր ծրագիրը, որի համար սահմանվեց 10 րոպե (Կանոնակարգի 4.8 կետ): Ծրագրի ներկայացումից հետո խորհրդի անդամ Գ.Մամիկոնյանը հարց ուղղեց

թեկնածուին՝ զարգացման ծրագրի վերաբերյալ, որին տրվեց հակիրճ ու սպառիչ պատասխան:

Համաձայն Կանոնակարգի 4.2 կետի գ ենթակետի՝ ձևավորվեց հաշվիչ հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվեցին Խորհրդի անդամներ Կ.Գիլոյանը, Լ.Միրզոյանը, Գ.Մամիկոնյանը, Ռ.Խաչատրյանը, Ս.Ավետիսյանը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Կ.Գիլոյանը, քարտուղար՝ Լ.Միրզոյանը:

Խորհրդի նախագահ Կ.Գիլոյանը ներկայացրեց գաղտնի քվեարկության կարգը և քվեաթերթիկները, որոնց հետնամասին ստորագրեցին հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները:

Թվեաթերթիկի մեջ նշված էր մեկ թեկնածուի անուն, ազգանուն, հայրանունը «դեմ եմ» և «կողմ եմ» նշումով: Քվեարկելու համար Խորհրդի անդամը պետք է V-աձև նշում կատարեր «դեմ եմ» կամ «կողմ եմ» բառերի դիմաց նշված վանդակում:

Խորհրդի անդամները առանձին մոտեցան քվեատուփին, վերցրին մեկ քվեաթերթիկ, կատարելով իրենց ընտրությունը՝ փակ քվեաթերթիկը գցեցին քվեատուփի մեջ:

Քվեարկության ավարտից հետո ըստ ստորագրման թերթիկի՝ քվեարկությանը մասնակցել էր Խորհրդի 18 անդամ, տրամադրվել էր 20 քվեաթերթիկ, օգտագործվել էր 18-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Կ.Գիլոյանը մարեց չօգտագործված երկու քվեաթերթիկ:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Կ.Գիլոյանը բացեց քվեատուփը և սկսվեց քվեաթերթիկների հաշվարկը:Քվեատուփում առկա էր 18 քվեաթերթիկ: Բոլոր քվեաթերթիկները վավեր էին: Քվեաթերթիկներից 17-ը «կողմ եմ» նշումով էին, և 1 «դեմ եմ» նշումով էր:

Այսպիսով, հաշվիչ հանձնաժողովի կազմած արձանագրության հիման վրա, Կ.Գիլոյանը ներկայացրեց, որ 17 «կողմ» ձայնով միակ թեկնածու Տիգրան Սիմոնյանը Խորհրդի կողմից ընտրվել է ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ռեկտոր, որի արդյունքում՝

Որոշվեց Տիգրան Գրիգորի Սիմոնյանին ՀՖՍԿՊԻ հիմնադրամի ռեկտորի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ Խորհրդի որոշումն ու ընտրության նիստի արձանագրությունն ուղարկել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն և ներկայացնել ՀՀ Կառավարության հաստատմանը:

Խորհրդի նախագահ՝ Կարեն Գիլոյան

Խորհրդի քարտուղար՝ Լաուրա Միրզոյան

Ստորագրված է
11.12.2024թ.